

Մ Ի Մ Ա Հ

Ո՞վ չէր ճանաչում սվազցի Գրիգորին. ո՞ւմ չէր յայտնի նրա կեանքը, նրա խելքը, նրա հմտութիւնը: Փորձառութեան մի անհուն, անսպառ աղբիւր էր նա, որից օգտուում էին թէ իր համագիւղացիք և թէ անխտիր բոլոր պանդուխտները: Դա մի բարձրահասակ, յաղթանդամ տղամարդ էր՝ մօտ յիսուն տարեկան, համակրելի թուիս դէմքով, մեծ, խոշոր աչքերով, խիտ յօնքերով և լայն ճակատով: Զարմանալի յիշողութեան տէր՝ նա պարզ և անպաճոճ, բայց գրաւիչ ոճով կը պատմէր իր տեսած-լսածները, իր գլխին եկած-անցածները մանրամաս դետայլներով: Իսկ ինչներ չէր նա տեսել, ինչներ չէր նա քաշել իր արկած-րով լի երկար ու ձիգ փոթորկալի կեանքի ընթացքում:

Դեռ երիտասարդ, գրեթէ նորապսակ, հաղիւ չորս տարի անցած՝ Գրիգորը թողնելով հայրական օջախը, ձեռքն առաւ պանդխտական գաւաղանը և վարդազոյն յոյսերով քայլերն ուղղեց դէպի Պօլիս: Անգրագէտ, անարհեստ՝ ինչ կարող էր անել, ինչ գործ, ինչ զբաղմունք պիտի նա գտնէր Բօսֆօրի ափերում: Նա ստեղծուած էր, կարծես, միմիայն համալութեան համար. նրա զօրեղ կազմուածքը, անչափ ոյժը բնութիւնը օժտել էր նրան միմիայն հակեր կրելու համար: Եւ Գրիգորը դիմեց այդ աշխատանքին: Նա բանում էր նաւահանգստի վրայ: Ահագին բեռը նրա համար մի խաղալիք էր, կարծես վազելով, թռչկոտելով էր տեղափոխում մէկ տեղից միւսը: Նրա ոյժի համբաւը շուտով տարածուեց ամենուրեք, նորեկ պանդխտի անունը արդէն յայտնի էր համալական աշխարհին:

Գրիգորը Պօլիս մնաց ութը տարի: Համեստ, պարկեշտ, ժուժկալ կեանք վարելով, նա իրան զրկում, իր բերանից կտրում, փառայ փառայի վրայ դնելով՝ մի փոքրիկ գումար էր չինում, տուն յղում՝ իր հօրն ու մօրը, որոնց խնամքին ու հրահողութեանն էր յանձնուած նրա երիտասարդ, կայտակ ամուսինը և երկու փոքրիկ զաւակները: Գրիգորը օրեր էր համարում՝ թէ երբ պիտի վերադառնայ հայրենիք, գրկէ, համբուրէ,

փայփայէ չարածճի սիրելիներին: Գիշեր-ցերեկ նրա հոգսը, նրա միտքը, նրա սիրտը այն փոքրիկների հետ էր: Նա յիշում էր նրանց նոյն իսկ այն ընկերներին, երբ ահագին բեռան տակ՝ թիկունքը կորացած, դէմքը կարմրած, աչքերը ուռած տնքում էր, գետինը թրջում ճակատից առատ հոսող քրտինքով: Իր սիրելիների պատկերը նոր ոյժ, նոր եռանդ էր տալիս և նա անտրտունջ քաշ էր տալիս համալական չարքաշ կեանքը:

Գրիգորի նպատակը, նրա իդէալը—մի փոքրիկ գումար չինել, ապա վերադառնալ իրանց գիւղը: Դատարի ձեռքով նա ի՞նչ երեսով կարող էր տուն դառնալ: Իսկ այդ գումարը նա չէր կարողանում յետ գցել: Չը նայած որ նա կրկնապատկում էր իր աշխատանքը, յաճախ բանում էր և գիշերները, բայց և այնպէս բան չէր գոյանում: Ի՞նչ անել:

Գրիգորը լսել էր, նրան շատ էին պատմել, որ հեռու՝ ով-կիանոսի միւս կողմին աշխատանք աւելի շատ կայ և աւելի լաւ է վարձատրւում: Իր հայրենակիցներից շատերն էին այնտեղ գնում. քանիցս առաջարկել էին իրան ևս գնալ, բայց Գրիգորը միշտ մերժել էր. ոչ, նա պէտք է տուն վերադառնայ: Իսկ վերադառնալն էլ նրան չէր յաջողւում... Եւ Գրիգորն ստիպուած ընտրեց Ամերիկայի ճամբան:

Յուսախաբ, իղձը չիրագործուած, ցաւով և վշտով թողեց նա Պոլսը: Նրա սիրտը կծկւում էր, որ չը կարողացաւ հայրենիք դառնալ՝ իր ծնողների, իր ընտանիքի, իր սիրելիների մօտ, որոնցից նա այժմ կրկին հեռանում է, հեռանում է տասնեակ հազար մղոններով, և ով գիտէ քանի տարի, քանի ժամանակով...

Ծանօթ նաւերից մէկի մէջ նա վարձուեց իբրեւ հասարակ մշակ և այդպէս հասաւ Մարսէյ, ուր նրան սպասում էին շատ նեղութիւններ: Օրեր էին պատահում, որ նա քաղցած էր մնում. բայց և այնպէս նա չէր ընկճւում, չէր վհատւում: Ամերիկա գնալը հեշտ չէր, փող էր հարկաւոր, այն էլ մեծ փող. որտեղից գտնէր այդ գումարը խեղճ պանդուխտը, որ Պոլսից մեկնելիս իր վերջին փարան անգամ տուն էր ուղարկել: Երկար ու ձիգ օրեր այս կամ այն կողմ թափառելուց յետ, Գրիգորին վերջապէս յաջողւում է ծանօթ նաւաստիների օգնութեամբ մտնել մի նաւ, որ տաւար պիտի փոխադրէր Նիւ-Եօքք: Գրիգորին վարձում են որպէս տաւարապահ, տաւարապահ չոգենաւի վրայ: Վարձը՝ իր փոխադրուելը—Մարսէյից Նիւ-Եօքք: Թէև այն նաւը վեց շաբաթից հազիւ պիտի հասնէր, բայց ի՞նչ արած, ուրիշ հնար չը կար:

Գրիգորը համնում է Ամերիկա՝ պանդուխտ և պրօլետարիատ ժողովրդի այդ աւետեաց նոր աշխարհը. համնում է նա Նիւ-Յօրք և հանդիպում է նոր դժուարութիւններին, նոր և անծանօթ թշուառութիւններին Անծանօթ տեղական լեզուին, տեղական պայմաններին, զուրկ բարեկամներից և ծանօթներից: Ի՞նչ անէր նա, որ կողմը գնար, ում դիմէր Նիւ-Յօրքի նման փոթորկալի, վիթխարի քաղաքում: Հայ պանդուխտները այն ժամանակ դեռ քիչ էին, և ո՞վ գիտէ՝ ո՞ւր էին նրանք գտնւում, որ գործարանում, որ յետ ընկած, կորած փողոցի մի անկիւնում: Երկար ժամանակ Գրիգորը թափառական կեսանք էր վարում՝ չըջելով Նիւ-Յօրքի աղմկալի փողոցները: Գիշերում էր նա բաց երկնքի տակ, նաւահանգստի չըջակայքում: Անձրև էր. հայ պանդուխտը կուշ եկած, կծկուած մի շինութեան մուտքի տակ, այդպէս էր լուսացնում աշնանային գիշերները, ցուրտ, երկար ու ձիգ, անվերջ գիշերներ. բայց մի անի չէր դուրս գալիս նրա կրծքից, ուր բարախում էր, սակայն, մի նուրբ և քնքոյշ սիրտ: Գործ չը կար: Երբեմն նրան յաջողւում էր մի քանի հակեր փոխադրել: Դրանով նա հաց էր գնում, որ լինում էր նրա միակ ուտելիքը: Բայց Գրիգորը դարձեալ չէր լքում, չէր յուսահատւում: Վհատութիւնը, կարծես, նրա համար գոյութիւն չունէր:

Այդպէս տնում է շաբաթներ, ամիսներ: Տաճկահայ պանդուխտը կամաց-կամաց ընտելանում է անգլիերէնին, ընտելանում է քաղաքին. սկսում է պարտել, փնտրել, հարց ու փորձ անել. վերջիվերջոյ նրան յաջողւում է գտնել հայերի բնակատեղին, որոնք օգնութեան ձեռք են հասցնում նորեկ հայրենակցին: Եւ անհ Գրիգորը մտնում է մի գործարան: Շաբթի վերջին ստանում էր իր վարձը: Նա ուրախ էր. այդչափ օրավարձ նա առաջին անգամն էր ստանում իր կեանքում:

Այդ շաբաթից սկսւում է նրա գործարանական, բանուորական կեանքը՝ լի դառնութեամբ և անդադար, անխոնջ աշխատանքով: Գրիգորը գործից փախչոյս չէր. աշխատանքը նրա միակ մխիթարութիւնն էր օտարութեան մէջ. նրանով էր միայն նա մոռանում, ննջեցնում իր ցաւերը, իր դարդերը: Բաւական էր, որ նա քիչ պարապ մնար, և պանդուխտութիւնը դառնում էր անտանելի: Իսկ պարապ, անգործ ամիսներ չատ: Գործարանը մշտա կրելով գոցուել է, կամ ընդհանուր գործադուլ է: Եւ անհ բանուորը՝ անգործ, պարապ, աննպատակ չըջում է փողոցից փողոց, գործարանից գործարան, մաշում նրանց չէմբերը. գործ չը կայ: Շաբաթների, յաճախ և ամիսների ընթացքում գործ չը ձարելով՝ պանդուխտը փոխւում է մի այլ քաղաք, այնտեղ ևս

բախում գործարանների դռները: Դարձեալ անօգուտ: Նա մեկնում է մի երկրորդ տեղ... Եւ այդպէս երկար ու ձիգ ամիսներ: Լաւ է որ դեռ բարի հայրենակիցներ կան, որոնցից պարտք առնելով կարելի է լինում ծայրը-ծայրին հասցնելով մի կերպ ապրել: Իսկ ինչ էր անում այդ ժամանակ, ինչով, ինչ միջոցներով էր ապրում հայրենիքում թողած ամբողջ ընտանիքը, որի միակ յոյսը, միակ նեցուկն ու ապաւէնը դարիւր որդին կամ էրեկն է: Գրիգորի սիրտը կծկւում էր, երբ միտն էր գցում իր սիրելիներին. նա տանջւում, հալւում էր, բայց լուռ, անտրտունջ: Սոսիկներին միայն յատուկ համբերութեամբ նա արիւարար տանում էր անողորմ կեանքի հարուածները: Նա երբէք չէր արտայայտել իր ցաւը, իր դարդը, որ սակայն նրան կորզում, մաշում էր: Ո՛չ մի տրտունջ, ո՛չ մի հառաչանք չէիք լսի նրա բերնից. մշտապէս խաղաղ էր նա, անվրդով, անխռով: Կարծես, մի անզգայ լեռ էր, լեռ...

Թէև ծննդավայրից հեռու, ընտանիքից, սիրելիներից կըտրուած, անջատուած, բայց ուշը-միտքը միշտ նրանց հետ էր. նըրանցով էր ոգևորւում, նրանցով շնչում, նրանցով միայն ապրում: Նա չէր խնայում նրանց համար ո՛չ մի բան. իր աշխատանքի մեծ մասը նրանց էր ուղարկում: Հոգ չէ, որ ինքը լաւ հագուստ երբէք չէր ունենում, փոյթ չէ, որ ինքը նեղ ու մութ սենեակում է բնակւում, քչով բաւականանում, իրան զրկում զուարճութիւններից և ուտելուց, միայն թէ իր ընտանիքը, իր սիրելիները պակասութիւն չզգան, սրան-նրան չը դիմեն՝ պարտք կամ փոխ առնելու:

Տասն և հինգ տարի են անցել այն օրից, որ Գրիգորը ոտք դրեց Նիւ-Եօքը: Նրան դեռ չէր յաջողուել հայրենիք վերադառնալ: Պանդուխտներից ո՞րն էր կարողանում այդ իղձն իրագործել: Իսկ նորեկների թիւը օր օրի վրայ աճում էր ու աճում. խումբ-խումբ գալիս էին նրանք, գալիս և երկիրը դատարկում իր աբու զաւակներից... Նիւ-Եօքից սկսած Բոստօն, Ուստը, Լովէլ, Լորէնս, Նեադուայ, Պօրտլանդ, Ֆիլադելֆիա, Չիկագօ... Նրանց տուտը հասել էր նոյն իսկ հեռու Կալիֆօրնիա:

Այդ քաղաքներում տաճկահայ բանուորներն ապրում են զատ-զատ խմբերով: Տասը-քսան համագիւղացիք, որոնք յաճախ միմեանց հետ աղգական կամ բարեկամներ լինելով, գտնուելով Ամերիկայի նման օտար հողի վրայ, բնականաբար, միանում, մի ընտանիք, մի օջաղ են կազմում. բայց կիսատ, անկատար օջաղ. պակաս էր նրա գլխաւոր սիւնը և նեցուկը՝ կինը, որի բացակայութիւնը նկատուում էր իւրաքանչիւր քայլափոխում:

Հայ բանուորները չեն խառնուում, չեն շփուում տեղացի բանուորների հետ. չեն ապրում նրանց կեանքով, ոգևորում, ներշնչում պտօխտարիատ դասակարգի սրտին-հոգուն մօտ, թանգ, սիրելի գաղափարներով և իդէալներով: Նրա միտինգներին հայ բանուորը շատ սակաւ է յաճախում. տեղացիների գործադուլներին նա գրեթէ չէ մասնակցում:

Ինչիցն է այդ անտարբերութիւնը:

Ամերիկացի բանուորը աւելի լաւ է վարձատրւում, քան օտարերկրացին: Գործադուլների ժամանակ ամերիկացին հնարունի երկար ամիսներ առանց աշխատանք ապրել: Տրադ-իւնօնի հարուստ գանձարանն է նրան այդ միջոցները մատակարարում: Իսկ հայ բանուորներից շատ քչերին է յաջողւում մտնել անգլիախօս պրօփետարիատի այդ հօօր, կազմակերպութեան մէջ, որ ճիւղաւորուած, տարածուած է Միացեալ-Նահանգների արդիւնաբերական բոլոր կէտերում: Ամերիկացի բանուորը՝ զինուած ընտրողական և ազատ քաղաքացիի այլ իրաւունքներով, թէև սեփական տանից, հողից զուրկ, բայց իր ընտանիքում, իր հայրենիքումն է: Իսկ տաճկահայը՝ վաթանից պոկուած, ընտանիքից կտրուած, անջատուած, անծանօթ տեղական օրէնքներին, լեզուին, պայմաններին,—առանձնացած, կղզիացած կեանք է վարում: Նա այլ հոգսեր, այլ ցաւեր ունի, որ կորչում են նրա սիրտը, մաշում նրա կեանքը: Այդ ցաւերից ազատ են նրան վիճակակից իտալացի, կանադացի և այլ գաղթական բանուորները...

Այդպէս կղզիացած կեանք էր վարում և Գրիգորը, որի չուրջն էին ժողովուել իր համագիւղացիք: Նրանք ընակւում էին մի անշուք տան մէջ, որ ընկած էր Լ. քաղաքի մի ծայրում: Մի յարկանի, գրեթէ միախակ կանգնած էր նա մի տափարակի վրայ. հարևան տներ չը կային: Դրսից կրով ծածկած, որ տեղտեղ արդէն թափուել էր, պատուհանների ապակիներից շատերը կոտրտած, թղթով էին փոխարինած: Անցորդի վրայ նա մի ինչ-որ տխուր տպաւորութիւն էր գործում: Ներսը աւելի անշուք, աւելի մռայլ և տխուր էր: Չորս ցածառաստաղ սենեակ էր և մի խոհանոց: Մի սեղան առանց սփռոցի, չուրջը մի քանի հատ կիսախարխուլ աթոռներ,—անա՛ ճաշարան-ընդունարանի կահ-կարասիքը, զարդ-զարդարանքը: Պատերը մերկ, չպալները պատռտած, կեղտ ու մրից սևացած: Միւս երեք սենեակները ննջարանների տեղ էին ծառայում. իւրաքանչիւրում երկ-երկու մահճակալներ, նոյնպէս խարխուլ, թոկով կապկպած, ամրացրած: Վեց մահճակալ տասն և մէկ մարդու համար: Տեղաշորերը առանց բարձրեւի, առանց սաւանների, պատռտած, կեղտոտ:

Կեղտ ու փռչիով ծածկուած էին պատերը, պատուհաններն ու յատակը: Իսկոյն նկատուում էր հայ կնոջ բացակայութիւնը, որ ամենազբաւ խրճիթն անգամ դարձնում է վայելուչ, յստակ, սարքին-կարգին:

Տան մեծը Գրիգորն էր, որին յարգում, պատուում էին անխտիր բոլոր տանեցիք: Նրան յարգում էին ոչ միայն նրա տարիքի պատճառով, այլ և նրա խելքի, հմտութեան և այն խնամքի համար, որ նա չէր խնայում իր համագիւղացիներից ոչ ոքին: Մի նեղ ընկած բոպէին, մի դժուար կացութեան ժամանակ նրան էին դիմում, նրա կարծիքը, նրա խորհուրդը հարցնում, նրա օգնութիւնը խնդրում: Եւ այդ ոչ միայն տանեցիք, այլ և Լ. քաղաքի միւս հայ պանդուխտներից շատ շատերը:

Գրիգորենց տունը—այդ անունով էր նա յայտնի Լ. քաղաքում—բաց էր անխտիր բոլորի առջև: Երեկոները, մանաւանդ շաբաթ երեկոները, երբ վեց օր գործարանում աշխատելուց յետոյ միւս օրը՝ կիւրակի, պիտի ազատ լինէին, այդ երեկոները պանդուխտների միւս տներից ժողովում էին Գրիգորենց մօտ գրոյց անելու: Թէև ուշ գիշեր էր լինում արդէն, բայց նրանց լոյսը դեռ վառ. պատմելիք, ասելիք չատ, այն էլ Գրիգորի պատմելիքը. ապա շաբաթուայ ընթացքում երկրից եկած նամակները, ստացած խարրիկները: Ծիծաղ և քրքիջ թէև պակաս չէր այդ ժողովներից, բայց տխուր, մեղամաղձոտ նօտան միշտ գերակշռում էր: Հայրենիք վերադառնալ ո՞վ չէր նրանից ցանկանում, երազում. բայց նրանք միմեանց երբեք չէին յայտնում. դրա մասին խօսակցութիւն անգամ չէր լինում: Իւրաբանչիւրի դէմքի վրայ գրոշմուած էր այդ իղձը, այդ բաղձանքը:

Այդպէս կիսախաղաղ սահում էր ժամանակը, փայլուն յոյսերով լի օրերը: Գալիս են այլ օրեր: Անցնում են շաբաթներ, ամիսներ՝ երկրից նամակ, լուր չը կայ: Ի՞նչ է եղել, ի՞նչ է պատահել: Ծովն է ուռել, բարձրացել, ջրհեղեղել, ծածկել ամեն ինչ. համաճարակ մահն է անգլթաբար հնձել, տարել բոլորին... Մի հատ նամակը, մի փոքրիկ խաբրիկն անգամ չորացել է: Վրդովեցուցիչ անյայտութիւնը հալ ու մաշ է անում պանդուխտներին:

Տեղական թերթերի մէջ հեռագիրներ են լոյս տեսնում, որ գուժում են երկրում տեղի ունեցած խոշոր աղէտներ... Այրել, քարուքանդ են արել տներ, աւաններ, ամբողջ գիւղեր. կոտորել, յօշոտել են հարիւրաւոր, հազարաւոր ընտանիքներ, կին, մանուկ, երեխայ...

Յարաբ մեր գիւղին չէն դիպել,—յուսահատաբար հարց էին տալիս բանուորները: Յարաբ մեր ընտանիքն ազատուէց. ինչ եղաւ մայրս, ինչ եղաւ քոյրս. ուր է որդիս, ուր է կինս... Ա՛խ, ինչո՞ւ, ինչո՞ւ մենք եւս այնտեղ չենք...

Տխուր ու արտում պանդուխտները գնում էին գործարան: «Նամակ չը կայ»,—դա էր լինում առաջին խօսքը, որ արտասանում էր բանուորը երեկոյեան տուն դառնալիս. դա էր այժմ նրանց սովորական «բարի իրիկունք»: Ընթրիքի ժամանակ ոչ մի խօսակցութիւն, ոչ մի զրոյց. լուռ ու մունջ էին բոլորեքեան. նոյն իսկ Գրիգորը, այն Գրիգորը, որին ծանօթ չէր վհատութիւնը, որ միշտ ուրիշին սիրտ էր տալիս, քաջալերում: Նա եւ լուռ էր և մեկամաղձոտ: Ընթրիքից յետոյ նրանք սովորաբար նստում էին զրոյցելու: Այժմ ոչ ոք չէր ուզում խանգարել սարսափելի լուռութիւնը: Երբեմն պանդուխտներից մէկն ու մէկի հայեացքը մեքենայաբար դառնում էր դէպի Գրիգորը, որ արմունկները յենած ծնկներին, գլուխը խոնարհեցրած ծխում էր անընդհատ: Նա գիտէր, նա զգում էր, որ իրան սպասում էին և նա աշխատում, ճիգ էր թափում խօսել, միամտացնել խեղճերին. բայց լեզուն հրաժարւում էր և նա բառ չէր գտնում ասելու: «Աստուած ողորմած է»,—արտասանում էր նա, բայց աւելի իրան, իր վերտը, իր միտքը հանդստացնելու, խաղաղացնելու համար, քան միւսներին...

Անցնում են օրեր, շաբաթներ: Դարձեալ նամակ չը կայ: Միթէ բոլորն էլ մեռել, ոչ մի հոգի չէ մնացել, որ մի տող, մի երկու բառ գոնէ գրէ: Անցնում է մի ամիս, երկու. բայց այն չարաբաստիկ թղթի կտորը չը կայ ու չը կայ:

Այնանային երեկոյ էր: Ամպամած երկինքը ցածրացել, իջել էր բելորովին, մշուշով պատել, մշուշի մէջ թաղել և ճնշում, խեղդում էր նրան: Թանձր խաւար էր տիրում ամեն տեղ, բարակ անձրեն էլ մաղում էր անընդհատ: Յուրտ էր, անտանելի ցուրտ: Յուրտ էր դուրսը, ցուրտ էր և խոնաւ անկրակ տներում, ուր կուշ եկած, իւրաքանչիւրը մի կողմ քաշուած լուռ նստած էին պանդուխտ-բանուորները: Ոչ ոք չէր շարժւում տեղից. կարծես, քարացել, անշնչացած էին: Միայն անձրևի վշտոյն էր, որ խանգարում էր այդ սպանիչ լուռութիւնը: Նա թափւում էր շարունակ, խփում պատուհաններին, որոնցով կաթ-կաթ ծորալով եկել լիճ էր կապել յատակի վրայ:

Այնքան անհամբեր, արտառողի սպասուող լուրն ստացուել էր վերջապէս: Կռունկ չէր այն խաբրիկը բերողը, ոչ էլ նամակ. այլ մի ականատես, մի կենդանի վկայ, մի պատանի, որ

հրաշքով ազատուելով՝ միասիօնարների օգնութեամբ ընկել էր Ամերիկա։ Դա Գրիգորի եղբորորդին էր։

Լաւ էր, հազար անգամ լաւ առաջուայ անյայտութիւնը, քան այժմ։ Այն ժամանակ իւրաքանչիւրը դեռ մի փոքրիկ յոյս ունէր՝ թէ իր ընտանիքը, իրանց տնեցիք ողջ են, հրաշքով ազատուել են սարսափելի աղէտից։ Իսկ այժմ։ Տխուր իրականութիւնը անաւայտեղ է, այնտեղ՝ իւրաքանչիւրի աչքի առջև ցցուած։ Նա պարզ տեսնում է իրանց տունը այրուելիս, անյազ բոցերը լափում են նրան, կրակի ճաթձթոցի միջից նա լսում է իր սիրելիների, իր հարազատների աղեկտոր ճիչն ու լացը, յուսահատ կոչն ու աղերսանքը... Կրակը մարել, վերջացել է։ Լերկ, խանձոխ դառած պատերի միջից մուխ է միայն բարձրանում, շուրջը լռութիւն է տիրում, ոչ մի կենդանի չունչ, ամայութիւն կանարեալ...

— Կորսուաւ, լնցաւ ամեն բան, խոր հառաչ քաշելով չնչաց Գրիգորը ինքն իրան։

— Մենք մարդ չենք, մարդ,— բացականչեց նա դառնացած, — այլ նամուսից, պատուից զուրկ անասուններ՝ անարժան այս ծածկելու, — ասաց նա գլխարկը գետնին զարկելով, ի՞նչ ենք անում մենք այս քանդուածում. ինչու մենք եւ այնտեղ չենք, այնտեղ։ Եթէ մեռնել-սպանուել է, այրուել-խորովուել է՝ բոլորս միասին մեռնէինք, բոլորս միասին կոտորուէինք, շանա-հատակ լինէինք...

— Այսուհետեւ էլ ում համար, էլ ինչու համար ենք մենք ապրում, — շարունակեց նա փոքր ընդմիջումից յետոյ, — ում համար ենք աշխատում։ Ախ, բախտ, բախտ։ Այս ինչ վատ աստղի տակ ծնուեցանք մենք։ Ի՞նչ մեղք, ի՞նչ յանցանք գործեցինք...

Գրիգորը երկար չէր լռում։ Գծուած, կատաղած, որպէս վանդակի մէջ փակուած մի առիւծ՝ շանթեր էր նա արձակում, գոռում, մոնչում... Բայց նրան պատասխանող չը կար. շուրջը կարծես ամայութիւն էր տիրում. աթոռների վրայ նստածները, կարծես, կենդանի մարդիկ չէին, նալ մի-մի ուրուականներ։

Արդէն ուշ գիշեր էր. անձրեն անդադար տեղում էր. Լ. քաղաքը խոր քնի մէջ նիհիւում, հանգստանում էր։ Քնած չէր միայն Գրիգորը. միայնակ նստած սեղանի մօտ, գլուխը յենած աջ ձեռքի վրայ, երկար չէր կարողանում հանգստանալ. նա չէր ուզում, նրա ոյժից վեր էր, նա անզօր էր հաշտուել այն սարսափելի մտքի հետ, որ ինքը դեռ երէկ ընտանիքի, որդոց տէր, իսկ այժմ նրանցից զրկուած, որբայրի, անհայր, անմայր, անտուն մի թշուառական է։ Արտասուքը խեղդում էր նրան. բայց

Նա այնքան ոյժ ունէր, որ կարողացաւ հայրենակիցներին ներկայութեամբ իրան զսպել: Այժմ միայնացած նա արտասուում, նա ողորում, նա հեկեկում էր որպէս մի մանուկ: Միւս բանուորները թէև պառկած, բայց նրանք ևս քնած չէին. անկողնում մի կողքից միւսի վրայ էին շուռ դալիս. քուն, հանգստութիւն, անդորութիւն փախել էր նրանցից: Արտասուքը նրանց ևս խեղդում էր և թրջելով այտերը՝ խոշոր կաթիլներով թափւում կոշտ բարձերի վրայ:

Լուսադէմին, երբ պանդուխտները զարթեցան, տեսան Գրիգորին նոյն տեղը՝ սեղանի մօտ թեկն տուած, նստած: Այդ գիշեր նա անկողին չէր մտել, աչք չէր փակել: Բանուորները շտապ-շտապ հագնուեցան և առանց սովորական նախաճաշիկն անելու ուղևորուեցան դէպի գործարան: Գրիգորը մնաց մենակ: Գործարանի սուրիշի ձայնը նրան ցնցեց, սթափեցրեց: Նա ռեզից բարձրացաւ և մտամոլոր, մեքենայաբար դուրս եկաւ տնից: Անձրեւ դեռ չէր դադարել, այլ բարակ, հանդարտ կերպով մաշում էր: Հազարաւոր բանուոր-բանուորուհիներ ցրտից կուչ եկած, լուռ, անխօս շտապում էին գործարան: Գրիգորը միանալով նրանց հետ, անհետացաւ խառնիճաղանջ ամբոխի մէջ: Մի քանի րոպէից յետ նա արդէն գտնուում էր կտաւի գործաբանում, իր մեքենաների առջև:

Գրիգորը իր ձեռքի տակ ունէր վեց մեքենայ, որոնց բանեցնելը պահանջում է մեծ հմտութիւն, մասաւանդ մեծ ուշադրութիւն: Վեց մեքենաները գործում են միաժամանակ. յանկարծ մէկի իլիկի թեկն է քօլք ընկնում կամ կտրւում, անհրաժեշտ է անմիջապէս վազել, կարգի բերել. մի այլ տեղ իլիկների թեկն է վերջացել, հարկաւոր է նորը դնել. ապա մաքրել գործուածքը դուրս ցցուող թելերի ծայրերից... Հանգստութիւն չը կար. չարունակ ոտքի վրայ, աշալուրջ, միշտ հսկելիս, միշտ դիտելիս, մի րոպէ անգամ անհնար է անուշադիր լինել. դարան մտած որսկան շան նման, սպասողական դիրք ընդունած՝ պէտք է հսկել: Եւ այդպէս ամբողջ օրը՝ առաւօտեան ժամի 6-ից մինչ կէսօր, ապա մէկից—վեցը-եօթը:

Առաւօտեան վեցին գործարանի հինգ հազար բանուորները զինուորական ճշտապահութեամբ արդէն գտնուում էին մեքենաների առջև՝ իրանց պահականոցում: Եռյարկանի վիթխարի շինութիւնը նորից կենդանացած՝ ահաւոր, հուժկու զորդիւնով գործում էր մուկեցնաբար:

Գրիգորը ևս որպէս մի կենդանի մեքենայ գործում էր անդադար, բայց ոչ առաջուայ աշխուժութեամբ և եռանդով: Մի քանի ժամ աշխատելուց յետոյ նրա ոյժերը մատնում են նրան:

Վաղուց էր, որ երկու մեքենայի մի քանի իրիկները՝ առանց թել, պտոյտ էին գալիս աննպատակաբար։ Եւ Գրիգորը այդ չէր նկատում։ Նրա հարևան իրլանդացի ժակը, որ մի առանձին յարգանքով էր վերաբերում դէպի հայ բանուորը՝ վազելով մօտեցաւ նրան և ձեռքը մեկնելով դէպի այն երկու մեքենաները, յայտնեց եղելութիւնը։ Գրիգորը լրացրեց, կարգի բերաւ իրիկները։ Բայց մի ժամ յետոյ նրա մէկ մեքենան կանգնած, այլ ևս չէր բանում։ Իրլանդացի բանուորը մնացել էր զարմացած։ Դեռ առաւօտեան գործարան մտնելիս Գրիգորն իրան չը բարեկեց. իր «բարի լոյսին» անգամ նա չը պատասխանեց։ Հայ պանդխտի դժգոյն, միջնած, տխուր դէմքը չէր հեռանում ժակի աչքից։ «Ի՞նչ է պատահել սրան»,—հարց էր տալիս իրլանդացին ինքն իրան։ Նա մօտեցաւ Գրիգորին և ականջին բարձր ձայնով գոռաց, որ կառավարչից թոյլտուութիւն խնդրէ և գնաց տուն, քանի որ հիւանդ է։—Գործարանում մեքենաների դղըրդիւնից անհնարին է կամաց, ցածր խօսել։ Գրիգորը ոչինչ չատաց, միայն ձեռքով բացասական նշան արեց։ Հէնց այդ վայրկեանին եկաւ գործարանի վերակացուն, որ մի հեզ և բարի մարդ էր—մի երեւոյթ, որ շատ հազուադիւս է գործարանական կեանքում. կառավարիչ և... բարի... Նա Գրիգորին երեք նշանատուութիւն չէր արել և առիթ էլ չէր ունեցել. Գրիգորի նման բարեխիղճ, մաքուր, յստակ բանող շատ քիչ կար։ Այդ էր պատճառը, որ վերակացուն մի առանձին սիրով էր վերաբերում դէպի Գրիգորը։ Երբ տեսաւ մեքենան կանգնած, նա սկզբում բոլորովին ապչեց, ապա տեսնելով հայ բանուորին այնպէս ընկճուած, դարկացած, յանկարծ յիշեց տեղական թերթերի Պօլից ստացած հեռագիրները, թղթակիցները, մի սարսուռ անցաւ նրա մարմնով, և նա առանց մի բառ ասելու հեռացաւ, գնաց այդ բաժանմունքից, որպէս թէ ոչինչ չէր նկատած։

Հնչեց ձաչի սուլիչը. մեքենաները կանգ առան։ Գործարանի փակուած դռները բացուեցան և բանուորները դուրս խուժեցին դէպի հարևան ճաշարանները։ Մարդ, կին, աղջիկ, փոքրիկ տղայք, բոլոր հասակի և ազգութեան։ Դուրս եկաւ և Գրիգորը. միայն նա ճաշարան չը գնաց, այլ անցաւ գործարանի մօտ գտնուող մի խոււ փողոց և սկսեց յետ ու առաջ քայլել՝ չը նայած ցրտին և անընդհատ տեղացող անձրեին։ Անցաւ ձաչի ժամը. նա մեղմ, ծանր քայլերով՝ վերադարձաւ իր մեքենաների մօտ։

Երկու ժամ գործելուց յետ, Գրիգորը՝ ուժասպառ, թուլացած, քիչ էր մնում, որ զոհ լինէր իր անզգուշութեան։ Մեքենան ուղղելիս այնչափ մօտեցել էր նա միւս մեքենային, որ

վերջինս անիւժ՝ բռնելով նրա փեշը, ձգում էր. մի վայրկեան ևս՝ և նա պիտի նետուէր երկու մեքենաների նեղ արանքը, եթէ միայն իրանդացին չը լինէր: Ժակը՝ մի ոտովն գործելով, բռնեց Գրիգորին և այնպէս ոյժով դէպ իրան ձգեց, որ նրա վերի հագստի կէսը պատռուելով մնաց մեքենայի վրայ: Գրիգորը քիչ օրօրուեց և որպէս մի գնտակ վայր ընկաւ յատակի վրայ: Ժակը՝ մի ակնթարթում կանգնեցնելով իրանց մեքենաները, սրտատրոփ վազեց նրա օգնութեան: Գրիգորին անմիջապէս կառք նստեցնելով իրանդացու հետ միասին տուն ուղարկեցին:

Պանդուխտների բնակարանը հասնելով, Ժակը չը հեռացաւ հիւանդի մօտից, թէև այդպիսով նա զրկւում էր կէսօրուայ աշխատանքից: Նա պառկեցրեց Գրիգորին, ինքն էլ մօտը նստեց՝ սպասելով իր դժբախտ հարևանի հայրենակիցներին: Ժակը վաղուց է որ ճանաչում է Գրիգորին. նրա հետ հինգ տարուց աւել է, որ տնքում են մի և նոյն գործարանում, մի և նոյն մեքենաների վրայ: Նա երբէք այդ հայից մի վատ խօսք չէր լսել, վատ, անաղինու գործ չէր տեսել. Ժակը նրան յարգում, սիրում էր. չէր թագցնում նրանից ոչ մի բան, այնչափ մօտեցել, մտերմացել էին նրանք միմեանց: Իրանդացուն յայտնի էր Տաճկաստանի աղէտը: Բայց նրան դեռ յայտնի չէր Գրիգորի եղբորորդու գալուստը. այժմ տեսնելով այդ պատանու լացը, հեկեկանքը և իմանալով նրա ուժ, ինչ լինելը, իսկոյժ հասկացաւ ամեն բան և լռեց:

Գրիգորը, աչքերը գցած առաստաղի մի կէտի վրայ՝ լուռ պառկած էր: Իրանդացին նստած նրա գլխատակին նոյնպէս լուռ էր և տրտում: Նա մի բառ անգամ չարտասանեց. նա չէր համարձակւում, լեզուն չէր պատում հարցնել կամ սիրտ տալ, մխիթարել: Սփոփել, մխիթարել սովորական դատարկ բառերով և ֆրազներով,—այդ և՛ անտեղի է, և՛ աւելորդ: Նրանցով պանդխտի խոցոտուած սիրտը պիտի նորից տրորուէր, կրակի վրայ նորից իւղ ածուէր:

Երեկոյ էր. գործարանի չչակը սուլեց. բայց մի այնպիսի մեկամաղձոտ, չարագուշակ հնչիւններով, կարծես, շոգենաւի սիրէնը (sirène) լինէր, որ փութորկի, վտանգի ժամանակ յուսահատ, աղեկտուր, չարագուծ հնչիւններով օգնութիւն է հայցում: Բայց ովկիանոսի անհուն հորիզոնի վրայ նաւ չէ երևում. սիրէնը կրկին և կրկին սուլում է, սուլում. դարձեալ իզո՛ւր: Նրա ձայնը ոչ մի տեղ արձագանք չէ գտնում: Գրիգորին թւում էր, թէ ինքը գտնւում է այդ շոգենաւի վրայ՝ իր գաւախների և կնոջ հետ միասին: Նաւը խորտակւում է, նա սուզւում է ջրի

մէջ: Գրիգորը ամուր գրկած իր սիրելիներին, նրանց բարձրացրել, պարզել է դէպի վեր, դէպի երկինք: Զուրը ծփանք տալով կամաց-կամաց նաւն է թափւում: Նրանք խրում, խեղդւում են: «Օգնութիւն, օգնութիւն»,—աղաղակում է Գրիգորը և զարթնում:

Նրա շուրջը տխուր և գլխակոր կանգնած էին պանդուխտ բանուորները, որոնք լսելով տեղի ունեցած դժբախտութեան մասին, շտապել եկել էին: Եթէ նրա ներկայութիւնը, նրա կենդանի խօսքը ևս մեզանից պակսէ, ի՞նչ կը լինի մեր դրութիւնը, —խորհում էին բանուորները: Սակայն այս նոր դժբախտութիւնը տարօրինակ, անբնական չէր թւում նրանց. դոհերի երկար շարքի վրայ մի զոհ ևս է աւելանում. ուրիշ ոչինչ... Սըր-տատրոի, հեւալով շտապել էին նրանք տուն: Տեսնելով ժակին Գրիգորի մօտ նստած, նրանք գունատուեցան. բայց բարի ժակը միամտացրեց՝ յայտնելով, որ Գրիգորին ոչ մի երկիւղ չէ սպառնում: Եւ իրօք մեքենան նրան փնաւ չէր տուել:

Մահճակալի շուրջը պանդուխտները գլխարկներով, առանց հանուելու, առանց լուացուելու, կեղտ ու մուրի մէջ թաթախուած, լուռ, մտամոլոր շարունակ կանգնած՝ սպասում էին, կարծես: Բոլորն էլ կիսահիւանդ դրութեան մէջ. վիշտը հալել, մաշել էր ամենին:

Սրգէն ու զիշեր էր, երբ իրլանդացին «բարի գիշեր» մաղթելով, տխուր տալաւորութիւնների տակ հեռացաւ պանդուխտների բնակարանից:

Դուրսը անձրեւն արգէն դադարել էր, երկինքը պարզուել, ջինջ կապուտակում փայլում էին աստղերը վառվռուն: Խաղաղ էր ընութիւնը և հանդարտ. միայն լսում էր հեռուից և, գետի ալիքների ծփանքը: Նրանք մէկը միւսին հետեւելով գալիս, զարնւում էին ժայռոտ ափերին, շառաչում, աղմկում և լալով, ողբալով յետ ու յետ նահանջում, գնում, գրկախառնւում էին միւսների հետ և այդպէս միացած նորից յորձանք տալիս ուժգին: Բայց իզո՞ւր: Սակայն ալիքները չեն ընկճւում, չեն դադարում: Կատաղաբար գոռալով և նորից ու նորից զարնուելով ափերին՝ ճիգ էին թափում, անդադար, անվերջ կուում ու կուում:

Մի անգամ անկողին ընկնելով Գրիգորը այլ ևս չը կարողացաւ թողնել նրան: Նրա հայրենակիցները գիշեր-ցերեկ հոգում, աշխատում էին, չէին խնայում ոչ մի միջոց: Նրանցից մէկն ու մէկը հիւանդի մօտ էր մնում, ցերեկները հերթով որպէս զի չը զրկուէին գործարանի տեղից, գիշերները՝ ով պատահէր: Եւ այդպէս ամբողջ ձմեռ: Բայց այդ ամեն ջանքերը՝

բժշկական օգնութիւն, դեղ և այլն բոլորը, բոլորն էլ, աւանդ, իզուր անցան: Գրիգորը օր օրի վրայ նիհարում, հալւում էր: Դէմքը բոլորովին գունատուել, աչքերը խորն ընկել, ձեռքերը, բանուորական կոշտ, կոպիտ ձեռքերը բարակել, քնքշացել էին: Գլխի մազերն ու միտուքը ձերմակել, ոչ մի հատ սև մազ չէր մնացել: Նախկին աշխոյժ, առողջ, հսկայ, ուժեղ Գրիգորի ուրուականն էր միայն մնացել: Նա չէր խօսում, չէր պատմում. լուռ մտքերի մէջ խորասուզուած, անուշադիր ուրիշների պատմածներին, անտարբեր շուրջը վխտող, եռող, անյողգող ընթացող կեանքին:

Ապրիլ ամիսն էր, երբ բնութիւնը՝ պճնուած, զարգարուած, հրապուրում, զմայլեցնում է ամեն մի էակ: Խոտը բուսել, անել, բարձրացել էր. ծառերը գոյնզգոյն ծաղիկներով և տերևներով էին ծածկուել, գեղեցկապէս պճնուել. բուրում էր անոյշ հոտը: Թռչունների երգն ու ճրվողը, արագահոտ առուների կաշկաչիւնը, երևիսների ուրախ-զուարթ ճիչն ու քրքիջը... Կեանք էր շնչում, կեանք էր լիչում ամեն մի կողմից, ամեն մի անկիւնից: Հազար ու մի պչրանքներով զարգարուած բնութիւնը՝ մշտապէս կայտառ, մշտապէս աշխոյժ, հրաւեր էր կարգում. նա ձայն էր տալիս, նա կոչ էր անում՝ ապրել, վայելել իր բիւր և բիւր բարիքները:

Գրիգորը պառկած, աչքը յառել էր դէպի բաց պատուհանը. կարծես հիանում էր բնութեան այդ հրաշալիքներով: Ի՞նչ էր նա մտածում. ի՞նչ էր խորհում. ո՞ւմ էր նա յիշում... Երկար նայում էր նա. ամբողջ ժամերով նա չր հեռացրեց աչքը պատուհանից. բայց ոչ մի բացականչութիւն, ոչ մի բառ. միայն արտասուքի երկու խոշոր կաթիլներ գուրս ցլացին նրա աչքերից և թրջելով գունատ, նիհար աչտերը, ընկան բարձի վրայ:

Քիչ յետոյ հիւանդը՝ դիմելով իր մօտ նստած այդ օրուայ հերթապահ պանդխտին, ասաց.

— Թովմաս, այս տանը բոլորից մեծը դու ես այժմ: Ես գնում, ես մեռնում եմ... Մի խնդիրք ունեմ. նայիր այդ փորրիկին, ինչպէս քո հարազատ որդու վրայ: Ես, գիտես որ, այլ ես ոչ որ և ոչինչ չունեմ. դա է միայն մնացել մեր ամբողջ տոհմից...

Այս խօսքերի վրայ Թովմասը բռնեց հիւանդի ձեռքը և սեղմելով չրթունքներին, արտասուախառն ջերմ համբոյրներով նրան ծածկեց:

— Լաւ է, ի՞նչ ես անում, երեխայ չես դու,— հագիւ լսելի ձայնով ասաց Գրիգորը:

Այդ եղաւ նրա վերջին խօսքը:

Այդ օրը, երեկոցեան դէմ, պանդուխտներից մէկը՝ ներս գալով հիւանդի սենեակը և տեսնելով Թովմասին այլայլուած, չփոթուած, — շնչասպառ, հնալով շշնջաց.

— Ի՞նչ կայ:

— Մեռաւ, — պատասխանեց Թովմասը խորհրդաւոր ձայնով: Նա տեղից բարձրացաւ և հանգուցեալի ձեռքերը կամացուկ, զգուշութեամբ կրծքին խաչելով՝ մնաց տեղը անշարժ մեխուած. աչքը յառած այն վշտամաշ, դժգոյն դէմքին նա, լուռ արտասուում էր: Միւս բանուորը մեքենայաբար յետ ու յետ նահանջեց և թուլացած վայր ընկաւ մի աթոռի վրայ. գլուխն առնելով ձեռքերի մէջ՝ մնաց նոյնպէս անշարժ, արձանացած: Սիրտը կտոր-կտոր էր լինում. նա ողբում էր այդ կորուստը. միայն նա լաց չէր լինում. արտասուքը չորացել, ցամաքել էր նրա աչքերից:

Հետեեալ օրը Գրիգորի թաղումն էր:

Մինչ քահանան կատարում էր թաղման հանդէսը, մի բուռն պանդուխտներ, որոնց մէջ էր և իրլանդացի ժակը, զըլխակոր, աչքները յառած նոր ծածկուած գերեզմանի վրայ, լուռ արտասուում էին:

Քահանան վերջացրեց բայց բանուորները երկար չէին հեռանում գերեզմանատնից. նոր գոյացած թմրի շուրջը նստած՝ անխօս և լուռ էին նրանք: Լուռ էր և ընտելիւնը՝ խաղաղ, հանգիստ: Օրը պայծառ, գեղեցիկ, շուրջը հարուստ, փարթամ բուսականութիւն: Փչում էր մեղմ հովը և ծառերի տերևները կամացուկ շարժում: Սօսափում էին տերևները, շշնջում, օրօր թոթովում վշտով տոգորուած բանուորներին. մեղմ երգում, հանգիստ կարգում գերեզման իջած բազմատանջ ոսկորներին:

Ս. ՇԽԵԱՆՑ